ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ <<ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-218-08.07.2019-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| N | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. |
| 1. | Կառավարություն | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածը հանել՝ այն է՝ «Օրենսգրքի $169^{8}$-րդ հոդվածի վերնագրում «կողմից» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը»: | Ընդունվել է, քանի որ նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի $169^{8-}$րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վերապահել այլ մարմնի՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին: | |
| 2 | Կառավարություն | Նախագծի 2-րդ հոդված | Առաջարկվել է Նախագծի 2-րդ հոդվածից հանել «$169^{8}$,» թիվը: | Ընդունվել է, քանի որ նախատեսվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի $169^{8}$-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությունը վերապահել այլ մարմնի՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին: | Ընդունվել է: |